ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Ս. Ավանեսյան
«_____» _____2026թ.

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ–ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հասարակագիտություն*

ԴԱՍԱՐԱՆ *9* ԿԻՍԱՄՅԱԿ *I, II* ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ *2026-2027* ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ *34* (տարեկան) *1* (շաբաթական)

ԴԱՍԱԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հասարակագիտություն*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ *Զանգակ* ՀԵՂԻՆԱԿ *Կ. Հարությունյան*

ՈՒՍՈՒՑԻՉ *Ռուզաննա Խաչատրյան*

Քննարկվել, հավանության է արժանացել _____
մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____

Մեթոդմիավորման նախագահ _____ *Մերի Դանիելյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Մերի Մկրտչյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

№	ԴԱՍԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ	ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ	ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	ԳՐՔԻ ԷՋԸ	ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ			ԺԱՄԿԵՏԸ
					ԸՆԴ	ՏԵՍ	ԳՈՐԾ	
ԹԵՄԱ 1	Պետություն. Ներածություն: (11 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Բացատրել պետության դերն ու նշանակությունը, ձևավորել քաղաքացի–պետություն փոխհարաբերության կարևորությունը գիտակցելու կարողություն:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	9.1.1.Բացատրի պետական իշխանության էությունը և անհրաժեշտությունը: Հ31 9.1.2.Ներկայացնի պետության հատկանիշներն ու գործառույթները: Հ30 9.1.3.Նկարագրի իշխանության ճյուղերի տարանջատման և հավասարակշռման սկզբունքները: Հ30 9.1.4. Տարբերակի Հայաստանի պետական իշխանության ճյուղերի լիազորությունները: Հ29 9.1.5.Բացատրի քաղաքացիության, իրավունքի ու պարտականության էությունը: Մեկնաբանի «պետություն» և «քաղաքացի» հասկացությունները և ցույց տա դրանց փոխկապակցվածությունը: Հ39 9.1.6. Կարդա, լսի և վերլուծի կոռուպցիայի և թրաֆիքինգի առաջացման պատճառները և բացասական ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա: Հ16							
1	Պետություն և իշխանություն: Պետության հատկանիշները և գործառույթները:	Մեկնաբանի «պետություն» հասկացությունը: Դիտարկի պետությունը որպես հասարակական կյանքի կազմակերպման բարձր մակարդակ:Թվարկի պետության հատկանիշները: Հիմնավորի, թե ինչու է ոպետության մի շարք հատկանիշներ համարվում ոչ հիմնական: Օրինակների միջոցով ցույց տա պետության հիմնական հատկանիշներից յուրաքանչյուրի նշանակությունը հասարակական կյանքում:	Մեկնաբանում է «պետություն» հասկացությունը, թվարկում է պետության հիմնական հատկանիշները, հիմնավորում է ոչ հիմնական հատկանիշների էությունը և օրինակներով ցույց է տալիս յուրաքանչյուր հատկանիշի նշանակությունը հասարակական կյանքում:	5-19	1	0,5	0,5	
2	Պետական կառավարման ձև: Պետության կառուցվածք:	Ծանոթացնել պետության ներքին և արտաքին գործառույթներին, դրանց իրականացման մեխանիզմներին ու դերին հասարակության կայունության գործում:	Տարբերակում է պետության ներքին և արտաքին գործառույթները, կարողանում է վերլուծել պետական կառավարման և կառուցվածքի հիմնական ձևերը, բացատրում է դրանց դրսևորումներն ու դերը հասարակության կայունության ապահովման մեջ:	20-25	1	0,5	0,5	
3	ՀՀ սահմանադրական կարգը և պետական իշխանության ճյուղերի գործառույթները:	Բացատրել պետական իշխանության էությունն ու անհրաժեշտությունը, իշխանության ճյուղերի տարանջատման և հավասարակշռման սկզբունքները, կառավարման ու կառուցվածքի ձևերը:	Բացատրում է ՀՀ սահմանադրական կարգի հիմունքները, վերլուծում է իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը (օրենսդիր, գործադիր, դատական) և նկարագրում է ճյուղերից յուրաքանչյուրի հիմնական գործառույթները ՀՀ-ում:	26-31	1	0,5	0,5	
4	ՀՀ սահմանադրական կարգը և պետական իշխանության ճյուղերի գործառույթները: *(Հավասարակշռման սկզբունքները)*	Զարգացնել ժողովրդավարական պետությունում իշխանության ճյուղերի տարանջատման և հավասարակշռման սկզբունքի էությունը պարզաբանելու ու դրա անհրաժեշտությունը արժևորելու կարողություն:	Նկարագրում է իշխանության ճյուղերի տարանջատման սկզբունքը, բացատրում է զսպումների և հավասարակշռման մեխանիզմների գործառույթները, համադրում է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների դերերը և կարևորում դրանց	154-158	1	0,5	0,5	

			փոխգործակցությունը:					
5	ՀՀ սահմանադրական կարգը և պետական իշխանության ճյուղերի գործառույթները: *(Հավասարակշռման սկզբունքները)*	Վերլուծել Իմանուիլ Կանտի տեսակետը իշխանության ճյուղերի «փոխադարձ ստուգման» և «ինքնապաշտպանության» անհրաժեշտության վերաբերյալ: Համեմատել իշխանության տարանջատման առկայությունը (կամ բացակայությունը) բացարձակ միապետություններում և ժողովրդավարական հանրապետություններում: Բացահայտել այն լրացուցիչ երաշխիքները (ազատ ընտրություններ, դատական անկախություն, թափանցիկություն), որոնք թույլ չեն տալիս իշխանության չարաշահումը: Գնահատել քաղաքացիական հասարակության դերը պետական մարմինների գործունեության վերահսկման հարցում:	Գիտի, թե ինչու է ըստ Կանտի կարևոր, որ իշխանության յուրաքանչյուր ճյուղ օժտված լինի մյուսներին սահմանափակելու իրավասությամբ: Տարբերակում է նախագահական, խորհրդարանական և կիսանախագահական համակարգերում գործող զսպումների և հավասարակշռման հիմնական գործիքները (օրինակ՝ իմպիչմենտ, խորհրդարանի արձակում): Գիտի, որ առանց ժողովրդավարական վարչակարգի, իշխանությունների տարանջատումը կարող է կրել սոսկ ձևական բնույթ:Թվարկում է դատավորների նկատմամբ ներկայացվող խիստ պահանջները որոնք ապահովում են դատական իշխանության անկախությունը:Կարևորում է հանրային հաշվետվողականության և թափանցիկության նշանակությունը պետական միջոցների արդյունավետ օգտագործման հարցում:	159-162	1	0,5	0,5	
6	**Ամփոփում. 1 (հարց ու պատասխան)**	Հարց ու պատասխանի միջոցով ամփոփել անցած թեմաները, ստուգել սովորողների տեսական գիտելիքները և ձևավորված վերլուծական հմտությունները:	Պատասխանում է անցած թեմաներին վերաբերող հարցերին, հստակ ձևակերպում է հիմնական հասկացությունները, հիմնավորում է սեփական տեսակետները և կարողանում է վերլուծել ուսումնասիրված իրավիճակներն ու օրինակները:		**1**		**1**	
7	ՀՀ սահմանադրական կարգը և պետական իշխանության ճյուղերի գործառույթները:	Սովորողները կարողանան թվարկել և օրինակների միջոցով համեմատել Հայաստանի պետական իշխանության ճյուղերի հիմնական գործառույթները: Տարբերակեն Հայաստանի պետական իշխանության ճյուղերի լիազորությունները: Նկարագրի և ներկայացնի խորհրդարանի ներկայացուցչական, օրենսդիր և վերահսկողական գործառույթները: Ուրվագծի օրենքների ստեղծման ընթացակարգը և դրա վրա ազդեցություն գործելու մեխանիզմները Հայաստանում:	Գիտի իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքի էությունը՝ որպես ՀՀ սահմանադրական կարգի հիմնասյուն: Թվարկում և համեմատում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործառույթները՝ բերելով կոնկրետ օրինակներ առօրյա քաղաքական կյանքից: Տարբերակել Ազգային ժողովի, Կառավարության և դատարանների լիազորությունների շրջանակը՝ բացատրելով, թե ինչպես է դրանցից յուրաքանչյուրը զսպում մյուսին: Ներկայացնում է խորհրդարանի դերը որպես ժողովրդի ներկայացուցչական մարմին և մանրամասնել նրա	163-171	1	0,5	0,5	

			վերահսկողական գործիքակազմը: Գիտի օրենքի ստեղծման ողջ շղթան՝ նախաձեռնությունից մինչև ուժի մեջ մտնելը, և նշել քաղաքացիների մասնակցության հնարավորությունները: Արժևորում է իրավական պետության մեջ իշխանության ճյուղերի անկախության կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում:					
8	Պետություն և քաղաքացիություն	Ձևավորել քաղաքացիության, իրավունքների ու պարտականությունների էությունը հասկանալու և քաղաքացի-պետություն փոխհարաբերության կարևորությունը գիտակցելու կարողություն:	Բացատրում է քաղաքացիության էությունը, նկարագրում է քաղաքացի-պետություն իրավական կապը, ներկայացնում է հիմնական իրավունքներն ու պարտականությունները և կարողանում է վերլուծել պատասխանատու քաղաքացիության դերը պետության զարգացման գործում:	32-35	1	0,5	0,5	
9	Կոռուպցիա: Թրաֆիքինգ. ծագման պատճառները և հետևանքները:	Ուսումնասիրել կոռուպցիայի էությունը, դրսևորման ձևերը, առաջացման պատճառները և բացասական ազդեցությունը հասարակության վրա:	Սահմանում է կոռուպցիայի էությունը, նկարագրում է դրա դրսևորման ձևերը (կաշառակերություն, հովանավորչություն), տարբերակում է պատճառները և կարողանում է վերլուծել կոռուպցիայի բացասական հետևանքները հասարակության ու պետության վրա:	36-39	1	0,5	0,5	
10	Կոռուպցիա: Թրաֆիքինգ. ծագման պատճառները և հետևանքները:	Ուսումնասիրել թրաֆիքինգի (մարդկանց առևտրի) էությունը, վտանգները, առաջացման պատճառները և դրա դեմ պայքարի մեխանիզմները:	Բացատրում է թրաֆիքինգի էությունն ու հիմնական վտանգները, տարբերակում է դրա առաջացման պատճառները, կարողանում է վերլուծել կանխարգելման ու պաշտպանության մեխանիզմները և նկարագրում է անվտանգ վարքագծի կանոնները:	40-43	1	0,5	0,5	
11	**Ամփոփում. 2 (խմբային աշխատանք)**	Խմբային աշխատանքի միջոցով ամփոփել «Պետություն. Ներածություն» թեմայի տեսական գիտելիքները, արժևորել քաղաքացի-պետություն կապը և իշխանության տարանջատման սկզբունքները:	Խմբային աշխատանքում համադրում է պետության հատկանիշների, գործառույթների ու իշխանության ճյուղերի վերաբերյալ գիտելիքները, գնահատում կոռուպցիայի ու թրաֆիքինգի վտանգները և հիմնավորում քաղաքացի-պետություն փոխհարաբերության կարևորությունը:		**1**		**1**	

ԹԵՄԱ 2	Պետություն և մշակույթ: (4 ժամ)
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել հանրային կյանքի վրա մշակույթի ազդեցությունը վերլուծելու կարողություն:
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	9.2.1.Նկարագրի «մշակույթ» հասկացությունը, դրա առանձնահատկությունները: Հ15 9.2.2.Մեկնաբանի մշակույթ-պետություն փոխազդեցությունները: Հ29

	9.2.3.Դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները: Հ44 9.2.4.Ճանաչի ազգային մշակույթը, նյութական և հոգևոր ժառանգությունը և դրանց ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ: Հ45							
12	Մշակույթի ազդեցությունը հանրային կյանքի վրա:	Ծանոթացնել «մշակույթ» հասկացությանը, դրա առանձնահատկություններին, նյութական ու հոգևոր ժառանգությանը և հանրային կյանքի վրա դրանց ազդեցությանը:	Սահմանում է «մշակույթ» հասկացությունը, տարբերակում է նյութական և հոգևոր մշակութային ժառանգության տեսակները և կարողանում է վերլուծել մշակույթի դերն ու ազդեցությունը հանրային կյանքի և հասարակական վարքագծի ձևավորման վրա:	43-47	1	0,5	0,5	
13	Մշակույթի ազդեցությունը հանրային կյանքի վրա:	Ձևավորել մշակույթ-պետություն փոխազդեցությունները մեկնաբանելու և տարբեր ժամանակաշրջանների ու ազգերի մշակութային արժեքները ճանաչելու կարողություն:	Մեկնաբանում է մշակույթի և պետության փոխազդեցությունը, ճանաչում ու գնահատում է տարբեր ժամանակաշրջանների ու ազգերի մշակութային արժեքները և կարողանում է վերլուծել մշակութային ժառանգության պահպանման նշանակությունը:	48-54	1	0,5	0,5	
14	Մշակույթը՝ որպես սոցիալական փոփոխությունների գործընթացի շարժիչ ուժ կամ խոչընդոտ:	Ձևավորել հանրային կյանքի և սոցիալական փոփոխությունների վրա մշակույթի ունեցած դրական ու բացասական ազդեցությունը գնահատելու կարողություն:	Գնահատում է մշակույթի դրական և բացասական դերը սոցիալական փոփոխությունների ընթացքում, բերում է օրինակներ, թե ինչպես կարող է մշակույթը խթանել կամ խոչընդոտել հասարակական առաջընթացին, և կարողանում է վերլուծել մշակութային ավանդույթների ու նորարարությունների փոխհարաբերությունը:	55-59	1	0,5	0,5	
15	**Ամփոփում 3. (թեստային աշխատանք, Google Forms)**	Google Forms գործիքի միջոցով ստուգել նախորդ թեմաների վերաբերյալ ձեռք բերված տեսական գիտելիքներն ու վերլուծական հմտությունները:	Գործնական աշխատանքում ընդհանրացնում է նախորդ թեմաների վերաբերյալ գիտելիքները, ճշգրիտ պատասխանում է առաջադրանքներին և արժանահավատորեն հիմնավորում իր ընտրած տարբերակները:		**1**		**1**	
ԹԵՄԱ 3	Պետություն և քաղաքացիական հասարակություն: (5 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել քաղաքացիական հասարակության նշանակությունը մեկնաբանելու, հանրային բարիքի ստեղծման համար քաղաքացիական հասարակության և պետական իշխանության ինստիտուտների փոխգործակցության անհրաժեշտությունը գիտակցելու կարողություն:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	9.3.1.Բացատրի քաղաքացիական հասարակության նշանակությունը պետական իշխանության գործունեության վերահսկողության խնդրում: Հ27 9.3.2.Ներկայացնի պետական իշխանության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխազդեցությունը հանրային բարիքի ստեղծման գործում, արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը: Հ31 9.3.3.Մեկնաբանի հասարակական կազմակերպությունների, շարժումների, միությունների, ԶԼՄ-ների և այլ կառույցների դերակատարությունը շահերի պաշտպանության, բազմազանության խթանման և բազմակարծության ապահովման գործընթացներում: Հ31							
16	Քաղաքացիական հասարակության բաղադրիչները և գործառույթները:	Բացատրել քաղաքացիական հասարակության կառուցվածքը, դրա հիմնական բաղադրիչներն ու գործառույթները պետական իշխանության	Բացատրում է քաղաքացիական հասարակության էությունն ու կառուցվածքային բաղադրիչները, նկարագրում է դրա հիմնական	59-64	1	0,5	0,5	

		վերահսկողության գործում:	գործառույթները և կարողանում է վերլուծել քաղաքացիական հասարակության դերը պետական իշխանության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու գործընթացում:					
17	Շահերի պաշտպանություն և բազմակարծություն:	Ձևավորել հասարակական կազմակերպությունների, շարժումների և միությունների դերը շահերի պաշտպանության ու բազմակարծության ապահովման գործընթացներում արժևորելու կարողություն:	Նկարագրում է հասարակական կազմակերպությունների, շարժումների ու միությունների գործունեությունը, բացատրում է բազմակարծության նշանակությունը և կարողանում է վերլուծել տարբեր սոցիալական խմբերի շահերի պաշտպանության մեխանիզմները:	65-66	1	0,5	0,5	
18	Զանգվածային լրատվության միջոցներ:	Ուսումնասիրել ԶԼՄ-ների դերն ու ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման, բազմակարծության ապահովման և իշխանության վերահսկողության գործում:	Բացատրում է ԶԼՄ-ների գործառույթներն ու առանձնահատկությունները, գնահատում է դրանց դերը «չորրորդ իշխանության» համատեքստում և կարողանում է վերլուծել ԶԼՄ-ների ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման ու տեղեկատվության հավաստիության վրա:	67-74	1	0,5	0,5	
19	Հանրային քաղաքականություն: Հանրային բարիք:	Ձևավորել հանրային բարիքի ստեղծման գործում պետական իշխանության և քաղաքացիական հասարակության փոխգործակցության անհրաժեշտությունը գիտակցելու կարողություն:	Սահմանում է «հանրային քաղաքականություն» և «հանրային բարիք» հասկացությունները, բերում է հանրային բարիքների օրինակներ և կարողանում է վերլուծել պետության ու քաղաքացիական հասարակության փոխգործակցության դերը հանրային բարիքի ստեղծման և պահպանման գործընթացում:	75-82	1	0,5	0,5	
20	**Ամփոփում 4. (բանավոր հարցում)**	Ամփոփել անցած նյութը, կատարել գիտելիքի ստուգում՝ հանձնարարված թեմաներից:	Կարողանում է պատասխանել տրվող հարցերին և ունի համապատասխան գիտելիքներ (կրկնություն հանձնարարված թեմաներ շուրջ)		**1**		**1**	
ԹԵՄԱ 4	Պետություն և տնտեսություն: (8 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել տնտեսական համակարգերի գործունեության մեխանիզմները, շուկայական տնտեսության առանձնահատկությունները, հասարակական բարեկեցության տեսանկյունից պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների դերը մեկնաբանելու կարողություն:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	9.4.1.Բացատրի, թե ինչպես են գործում տնտեսական համակարգերը: Ներկայացնի հայաստանյան տնտեսական և ֆինանսական համակարգերը, տարբերակի վերջիններիս մասնակիցներին ու նրանց դերերը: Հ20 9.4.2.Ուրվագծի պետության դերը տնտեսության մեջ, հասկանա պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների անհրաժեշտությունը: Հ16							
21	Տնտեսական համակարգեր:	Ծանոթացնել տնտեսական համակարգերի տեսակներին, դրանց գործունեության մեխանիզմներին և հիմնական առանձնահատկություններին	Տարբերակում է տնտեսական համակարգերի տեսակները, բացատրում է դրանց գործունեության մեխանիզմներն ու	84-92	1	0,5	0,5	

			առանձնահատկությունները և կարողանում է վերլուծել յուրաքանչյուր համակարգի առավելություններն ու թերությունները:					
22	Շուկայական տնտեսություն:	Սովորողները կկարողանան բացատրել, թե ինչ է տնտեսությունը, ինչպես են կայացվում տնտեսական որոշումները, ինչպիսի առանձնահատկություններ ունի այն Հայաստանում: պահանջարկը, կթվարկեն հայաստանյան տնտեսական ու ֆինանսական համակարգի մասնակիցներին, օրինակների միջոցով կներկայացնեն վերջիններիս դերերը: Սովորողները կգիտակցեն պետության դերը հասարակության տնտեսական և սոցիալական բարեկեցության, տնտեսական աճի գործում	Բացատրում է առաջարկի և պահանջարկի օրենքները, թվարկում է ՀՀ տնտեսական ու ֆինանսական համակարգի մասնակիցներին, օրինակներով ներկայացնում է նրանց դերերը և կարողանում է վերլուծել պետության դերը տնտեսական աճի ու հասարակության բարեկեցության ապահովման գործում:	93-98	1	0,5	0,5	
23	Շուկայական տնտեսություն:	Նկարագրի շուկայական տնտեսության առանձնահատկությունները և բացատրի, թե ինչու շուկան միշտ չէ, որ գործում է արդյունավետ: Վերլուծի պետության տնտեսական քաղաքականության նպատակները, գների կառավարման մեխանիզմները (առավելագույն և նվազագույն գին) և դրանց հետևանքները (պակասուրդ կամ հավելուրդ): Համեմատի ազատ շուկայի և պետական կարգավորման արդյունքները, անի եզրահանգումներ խառը տնտեսության արդյունավետության վերաբերյալ:	Բացատրում է, թե ինչ է շուկայի անկատարությունը և ինչ իրավիճակներում է պետությունը ստիպված միջամտել տնտեսությանը: Տարբերակում է դրական և բացասական արտաքին ազդեցությունները՝ բերելով իրական օրինակներ:	99-105	1	0,5	0,5	
24	**Ամփոփում 5. (Գործնական աշխատանք)**	Գործնական աշխատանքի (պաստառի պատրաստման) միջոցով ամփոփել տնտեսական համակարգերի, ֆինանսական կառույցների և շուկայի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները:	Գործնական աշխատանքում պատկերավոր ներկայացնում է տնտեսական համակարգերի և շուկայի գործառույթները, համադրում է հավաքագրված տվյալները և արժանահավատորեն հիմնավորում իր խմբի մոտեցումները:		**1**		**1**	
25	Հայաստանի ֆինանսական համակարգը:	Ներկայացնի հայաստանյան տնտեսական և ֆինանսական համակարգերը, տարբերակի վերջիններիս մասնակիցներին ու նրանց դերերը:	Սովորողը ներկայացնում և տարբերակում է Հայաստանի տնտեսական և ֆինանսական համակարգերը, դրանց հիմնական մասնակիցներին, նրանց գործառույթներն ու դերերը:	106-113	1	0,5	0,5	
26	Պետության տնտեսական և սոցիալական քաղաքականության բովանդակությունը:	Ուսումնասիրել տնտեսության մեջ պետության դերը, տնտեսական քաղաքականության բովանդակությունն ու հարկաբյուջետային մեխանիզմները:	Նկարագրում է տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերը, բացատրում է հարկաբյուջետային քաղաքականության էությունն ու պետական բյուջեի ձևավորման աղբյուրները և կարողանում է վերլուծել տնտեսական	114-119	1	0,5	0,5	

			քաղաքականության ազդեցությունը տնտեսական կայունության վրա:					
27	Պետության տնտեսական և սոցիալական քաղաքականության բովանդակությունը:	Բացատրել պետության սոցիալական քաղաքականության էությունը, հասարակական բարեկեցության ապահովման և սոցիալական արդարության խթանման գործիքակազմերը:	Բացատրում է պետության սոցիալական քաղաքականության նպատակներն ու ուղղությունները, նկարագրում է սոցիալական ապահովության ու աջակցության ծրագրերը և կարողանում է վերլուծել հասարակական բարեկեցության ու սոցիալական արդարության ապահովման գործիքակազմերը:	120-127	1	0,5	0,5	
28	**Ամփոփում 6. (բանավոր հարցում)**	Մեկնաբանի քաղաքական մշակույթի և վարչակարգի տիպը, քաղաքական, քաղաքացիական մասնակցության ձևերը քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման տեսանկյունից:	Կարողանում է պատասխանել տրվող հարցերին և ունի համապատասխան գիտելիքներ (կրկնություն հանձնարարված թեմաներ շուրջ)		**1**		**1**	
ԹԵՄԱ 5	Պետություն և քաղաքականություն: (6 ժամ)							
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման վրա քաղաքական մշակույթի և թափանցիկ կառավարման համակարգի ազդեցությունը վերլուծելու կարողություն:							
ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ	9.5.1.Նկարագրի քաղաքական մշակույթի և վարչակարգի տիպը, քաղաքական, քաղաքացիական մասնակցության ձևերը քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման տեսանկյունից: Հ15 9.5.2. Լսի, կարդա և դատողություններ անի բազմակարծիք և մասնակցային մշակույթի բնորոշ գծերի մասին: Հ31							
29	Քաղաքական մշակույթ:	Ծանոթացնել քաղաքական մշակույթի էությանը, տեսակներին և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրացման վրա դրա ունեցած ազդեցությանը:	Նկարագրում է քաղաքական մշակույթի տիպերը, բացատրում է քաղաքացիական մասնակցության ձևերը և կարևորում դրանց դերը օրինական շահերի պաշտպանության գործում:	128-135	1	0,5	0,5	
30	Քաղաքական մշակույթ:	Ձևավորել քաղաքացիական մասնակցության ձևերն արժևորելու և հանրային որոշումների կայացման վրա դրանց ազդեցությունը գնահատելու կարողություն:	Ներկայացնում է քաղաքացիական մասնակցության տարբերակները, դատողություններ է անում մասնակցային մշակույթի դերի մասին, արժանահավատորեն հիմնավորում է սեփական դիրքորոշումը և կարևորում քաղաքացու ակտիվ դերը:	136-144	1	0,5	0,5	
31	Քաղաքական համակարգ:	Ուսումնասիրել քաղաքական համակարգի էությունը, կառուցվածքային տարրերը (ինստիտուտներ, նորմեր, հարաբերություններ, գաղափարախոսություն) և դրա դերը հասարակական կյանքի կազմակերպման ու կառավարման գործում:	Սահմանում է «քաղաքական համակարգ» հասկացությունը, նկարագրում է դրա հիմնական բաղադրիչներն ու գործառույթները, վերլուծում է պետության, քաղաքական կուսակցությունների ու քաղաքացիական հասարակության փոխազդեցությունը քաղաքական համակարգում և գնահատում է դրա ազդեցությունը քաղաքացու իրավունքների ապահովման վրա:	144-146	1	0,5	0,5	
32	Քաղաքական համակարգ:	Ուսումնասիրել քաղաքական համակարգի կառուցվածքը, վարչակարգի տիպերը և դրանց ազդեցությունը	Նկարագրում է քաղաքական համակարգի բաղադրիչներն ու վարչակարգի տեսակները,	146-149	1	0,5	0,5	

		թափանցիկ կառավարման վրա:	արժևորելով դրանց ազդեցությունը քաղաքացու իրավունքների ապահովման վրա:					
33	**Ամփոփում 7. (թեստային աշխատանք, Google Forms)**	Google Forms թվային գործիքի միջոցով ստուգել նախորդ թեմաների վերաբերյալ ձևավորված գիտելիքներն ու հմտությունները:	Գործնական թեստում ընդհանրացնում է նախորդ թեմաների վերաբերյալ գիտելիքները, ճշգրիտ պատասխանում է առաջադրանքներին:		**1**		**1**	
34	Հետադարձ կապ	Վերլուծել ուսումնառության ընթացքում արձանագրված արդյունքները, քննարկել ձեռքբերումներն ու դժվարությունները, ապահովել երկկողմ հետադարձ կապ և նպաստել ինքնագնահատման ու ուսումնական գործընթացի բարելավման հմտությունների զարգացմանը:	գնահատում է սեփական ուսումնական առաջընթացը, նույնականացնում է ձեռքբերումներն ու բացթողումները, արձագանքում է ստացված դիտողություններին ու առաջարկներին և ձևակերպում է հետագա ուսումնառության բարելավմանն ուղղված քայլեր:		1	0,5	0,5	
				ԸՆԴԱՄԵՆԸ	***34***	***13.5***	***20.5***	